« 03 » նոյեմբեր 2023թ. No 5287 - Ա

«ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԹՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի Կլինիկական լաբորատոր ախտորոշման ամբիոն, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիր) և/կամ առցանց («Զում» հարթակ)

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

- Գրություն՝ 31.03-18.04.
- Թիրախային լսարան՝ կլինիկական լաբորատոր ախտորոշման մասնագետներ, մանրէաբաններ, արյունաբաններ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 18 տեսական և 5 գործնական կրեդիտ. դասընթացավար Նաիրա Բարսեղյանին՝ ՇՄԶ 18 տեսական և 5 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010583101

Օր 1	
13:30-15:00	**Դասախոսություն** Հանքային նյութերի փոխանակություն: Հյուսվածքներում դրանց կոմպլեքսները ածխաջրերի, օրգանական թթուների, սպիտակուցների հետ: Օրգանիզմում նյութափոխանակության վրա դրանց ներգործությունը: Na, K, Ca, P, Mg, Cl էլեկտրոլիտների ներգործությունը կենսաքիմիական պրոցեսների վրա
Օր 2	
13:30-15:00	**Դասախոսություն** Հիպոնատրիեմիա և հիպերնատրիեմիա, հիպո- հիպեր- կալիեմիա, հիպո- հիպեր- կալցիեմիա, հիպո- հիպեր- ֆոսֆորեմիա, մագնեզիումի հիպո և հիպեր ազդեցությունները կեսաքիմիական պրոցեսների վրա: Ֆոսֆորի և կալցիումի անտոգոնիզմը: Ֆոսֆորի և կալցիումի ներգործությունը վիտամին D-ի սինթեզի վրա: Քլորի հիպո-, հիպեր- քլորեմիա
Օր 3	
13:30-15:00	**Դասախոսություն** Թույների կենսաքիմիական դասակարգումը, մարդու օրգանիզմ ներթափանցման ուղիների նշանակությունը: Թույնի դոզայի վերլուծությունը՝ սահմանաթույլատրելի դոզա (ՍԹԴ-ՊԴԿ), LD_{50}, LD՝ մահացու դոզա: Թույնի կումուլյացիան և դրա տարաժամկետված ներգործությունը: Թույնին ընտելացման և կախվածության հայեցակարգը
Օր 4	
13:30-15:00	**Դասախոսություն**

	Թույնի ներգործության ժամանակային գործոնները և ներթափանցման ուղով պայմանավորված՝ կլինիկալաբորատոր ախտորոշման ցուցանիշների առաջնահերթությունները: Թույների ներթափանցումը կենսաբանական պատնեշներով՝ պլացենտար, հեմատոէնցեֆալիկ, պերօրալ, ինհալյացիոն և մաշկային: Թունավորումների տոքսիկոկինետիկ առանձնահատկությունները: Օրգանիզմում թույների բնական դետոքսիկացիան, կենսատրանսֆորմացիան
Օր 5	
13:30-15:00	**Դասախոսություն** Սուր թունավորումների կլինիկալաբորատոր ախտորոշում՝ նյարդային (քսիլոլ, բենզին, սպայզ, մորֆին, մուսկարին) և սիրտ-անոթային համակարգերի (սրտային գլիկոզիդներ, պոլինոզներ և այլն) թունաբանական ախտահարումներ
Օր 6	
13:30-15:00	**Դասախոսություն** Ստամոքս-աղիքային տրակտի ինտոքսիկացիա, սննդային թունավորումներ (բոտուլիզմ, սալմոնելոզ, ստաֆիլակոկային թունավորում): Հեմոլիտիկ թույների ցիտոտոքսիկ ներգործությունը արյունաստեղծ համակարգի վրա: Սնկային թունավորումներ (միկոտոքսիկոզ)
Օր 7	
13:30-14:30	**Դասախոսություն** Թունավորում ծանր մետաղների միացություններով: Էսենցիալ (անփոխարինելի) միկրոտարրերի նշանակությունը մարդու կենսաքիմիական փոխանակության պրոցեսների մեջ: Fe, Co, Cu մասնակցությունը արյունաստեղծման գործընթացներում: Fe- դեֆիցիտային, Co-դեֆիցիտային, Cu-դեֆիցիտային անեմիաներ
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ(PowerPoint Presentation)
Օր 8	
13:30-14:30	**Դասախոսություն** Յոդը (I) որպես հորմոնակտիվ էսենցիալ միկրոտարր: Յոդի (I) մինիմալ կենսաերկրաքիմիական էնդեմիան և յոդ-դեֆիցիտային հորմոնալ հիվանդությունները ՀՀ բնակչության շրջանում (էնդեմիկ խպիպ, կրետինիզմ): Յոդ-ծծմբային անտոգոնիզմ
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ (PowerPoint Presentation)
Օր 9	
13:30-14:30	**Դասախոսություն** Մոլիբդենի (Mo) մաքսիմալ կենսաերկրաքիմիական էնդեմիան, նրա ներգործությունը ֆերմենտատիվ պրոցեսների վրա (քսանդինօքսիդազա, ալդեհիդօքսիդազա, սուլֆիտօքսիդազա), մոլիբդենային պոդագրա հիվանդությունը ՀՀ բնակչության շրջանում
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ (PowerPoint Presentation)
Օր 10	
13:30-14:30	**Դասախոսություն**

	Սելենի (Se)-ի հակաօքսիդանտ նշանակությունը, սելենոպրոտեիդների ներգործությունը մկանային հյուսվածքի ակտիվության վրա: Սելենի (Se)-ի կիրառությունը իբրև քաղցկեղականխարգելիչ և կեսաբանական ակտիվ հավելում: Ցինկը (Zn) իբրև վաղ օնկոմարկեր կլինիկոլաբորատոր դիագնոստիկայում: Ցինկի (Zn) միժամանակյա եռակողմ ներգործությունը՝ ՌՆԹ-ի սինթեզում, հյուսվածքային ռեգեներացիայում և իբրև ֆունգիցիդ: Մանգանը (Mn) որպես կայուն օքսիդիչ
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ- (PowerPoint Presentation)
Օր 11	
13:30-14:30	**Դասախոսություն** Պայմանական-էսենցիալ (As, B, Br, F, Ni, Si) միկրոտարրերի նշանակությունը: Մկնդեղի (As) ներգործությունը մարդու օրգանիզմում իբրև հեմոլիտիկ, նեֆրոտոքսիկ, հեպատոտոքսիկ թույն: Բորբոսասնկերի՝ *(Penicillium, Aspergillus, Fusarium)* տոքսիկ, գազանման միացությունների ներգործությունը մարդու առողջության վրա: Մկնդեղի (As) կիրառությունը ատամնաբուժական պրակտիկայում: Բրոմի (Br) մասնակցությունը յատրոգեն հիվանդությունների առաջացման մեջ (բրոմիզմ, բրոմոդերմա, բնածին բրոմոդերմա)
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ- (PowerPoint Presentation)
Օր 12	
13:30-14:30	**Դասախոսություն** Ֆտորի (F) ազդեցությունը ոսկրային հյուսվածքի մինիրալիզացիոն պրոցեսներում: Ֆտոր-ապատիտ միացության սինթեզը, նրա հակակարիեսային նշանակությունը և կարիեսի կանխարգելումը խոշոր բնակավայրերում: Ֆտորը (F) որպես հեպատոտոքսիկ միկրոտարր և էնցեֆալոպաթիաների առաջացման գործոն: Ֆլյուրոզ
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ- (PowerPoint Presentation)
Օր 13	
13:30-14:30	**Դասախոսություն** Ատամնաբուժական պրակտիկայում (օրթոդոնտիա) լայնորեն կիրառվող նիկել (Ni) պարունակող մետաղալարերը և դիսբակտերիոզի զարգացումը: Լեգիոների հիվանդության ծագումն ու ընթացքը: Սիլիցիումի (Si) դիսպերս փոշիների կումուլյացիան ալվեոլիալ հյուսվածքում և սիլիկոզ՝ պնևմոկոնեոզ հիվանդության առաջացումը
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ- (PowerPoint Presentation)
Օր 14	
13:30-14:30	**Դասախոսություն** Թունավոր միկրոտարրերի (Pb, Al, Cd, Hg, Ra, Ag, Au) ներգործությունը մարդու օրգանիզմի վրա: Կապարի (Pb) անօրգանական միացությունները որպես ցիտոտոքսիկ, հեմոլիտիկ, նեֆրոտոքսիկ, հեպատոտոքսիկ թույներ: Կապարի (Pb) օրգանական միացությունները որպես նեյրոտոքսիկ նյութեր: Ալյումինը (Al) որպես Ալցհեյմերի հիվանդության

	սկզբնապատճառ: Որպես անտոցիդ միացություն ալյումինի (Al) լայն կիրառությունը սննդի և դեղագործական արդյունաբերության մեջ
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ-(PowerPoint Presentation)
Օր 15	
13:30-14:30	**Դասախոսություն** Կադմիումի (Cd) պարունակությունը ծխախոտի *(Nicotiana tabacum)* կազմում և ատամնավզիկի կադմիական օղակի առաջացման պրոցեսը: Սնդիկի (Hg) թունավոր ներգործությունը և մերկուրիալիզմ հիվանդության զարգացումը: Արծաթը (Ag) որպես արգինոզ մաշկային հիվանդության պատճառ: Ոսկու (Au) ռադիոիզոտոպների կիրառությունը ճառագայթաթերապիայում:
14:30-15:00	**Գործնական աշխատանք** Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ-(PowerPoint Presentation)

Գործնական վերլուծություն դեպքերի սխեմատիկ/մասնավորեցնող դիտարկմամբ-(PowerPoint Presentation)

Գործնական վերլուծություն և/կամ դեպքերի սխեմատիկ դիտարկման ժամանակ կատարվում է մասնավոր օրինակների ցուցադրում (ներառյալ մանրադիտարկային, բջջաբանական, տոքսոգեն փոփոխությունները արյան կազմում, մեզի նստվածքում և ֆեկալիաներում) և կլինիկական սիմտոմատիկ խանգարումների վերլուծություն՝ զուգակցված կլինիկական ախտորոշիչ ցուցանիշների սքրինինգով:

Դասընթացավար՝ Նաիրա Բարսեղյան: